

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Դիմում ԵՊԼՀ-ի ռեկտորի անունով:
2. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները: Գործերը հանձնելիս ներկայացնել նաև անձնագիրը:
3. Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):
4. Օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ):
 - 4.1. Օտար լեզվից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝
 - 1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը.
 - 2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹԻՍԻԷՖ)՝ 200 միավորը.
 - 3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:
 - 4.2. Այն դիմորդները, որոնց համար մասնագիտական առարկաներ են անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը, քննություն են հանձնում այլ օտար լեզվից:
 - 4.3. Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:

5. Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում (համապատասխան ամբիոնի կողմից դրական գրախոսականով):
6. Ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի):
7. Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):
8. Անձնական թերթիկ:
9. Թղթապանակ, որտեղ կպահվեն ասպիրանտի անձնական գործերը: